«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ «Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում»

Առարկա՝ Ռուսաց լեզու

Հետազոտող ուսուցիչ՝ Հասմիկ Պողոսյան

Ուսումնական հաստատություն՝ «Երևանի Դ . Հովսեփյանի անվանի. 191 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

ԵՐԵՎԱՆ – 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ_ **3**

1.1 Հետազոտական թեմայի արդիականությունը:

1.2 Հետազոտության նպատակը:

1.3 Հետազոտության խնդիրը:

ԳԼՈՒԽ 1: Արժեհամակարգի ձևավորման խնդիրները _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ 5

ԳԼՈՒԽ 2:Արժեհամակարգի ձևավորումը ռուսաց լեզվի դասերին _ _ _ _ _ _ _ _ 7

ԳԼՈՒԽ 3:Ազգային արժեքների կարևորությունը _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ 11

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ_ **13**

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ _ 15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արժեհամակարգը հասկացությունն է, որը ցույց է տալիս՝ որն է օբյեկտի բացասական կամ դրական կարևորությունը և երևույթների նորմատիվ արժեքային կողմը: Արժեքները օգնում են ճիշտ ընտրություն կատարել անհրաժեշտ պահին: Արժեքները այն գաղափարներն են, որոնցով առաջնորդվում է մարդը կյանքում: Սովորողների մեջ արժեհամակարգի ձևավորումը կարևոր է և արդիական,քանզի այդ անձի արժեհամակարգի ձևավորումը, որը կատարվում է դպրոցական տարիների ընթացքում, որոշում է աշակերտների հետագա հանդուրժող վարքագիծը, որի հիմքում ընկած է օտար և հարազատ մշակույթի հանդեպ հարգանք, հասարակության մեջ ինտեգրվելու հնարավորություն: Ռուսաց լեզվի դասավանդման մեթոդիկայում այդ խնդրի ուսումնասիրման գաղափարն այն է, որ լեզուն ուսումնասիրվում է որպես տվյալ ժողովրդի աշխարհայացքի արտացոլում, ժողովրդական մշակույթի և հոգևոր արժեքների պահպանման միջոց:

Մշակույթի և լեզվի ուսումնասիրման խնդիրը բազմիցս դիտվել է Կ.Դ. Ուշինսկու, Ա.Ա. Շախմատովի, Լ.Ի. Պոլիվանովի աշխատություններում, սակայն արժեհամակարգային ասպեկտ այն ստացավ 20 - րդ դարի վերջում: Աշակերտների մոտ արժեհամակարգի ձևավորումը սկսվեց փոխկապակցվել աշխարհի լեզվական քարտեզի ձևավորման հետ, իսկ տեքստը դիտվում էր որպես ժողովրդի արժեհամակարգի փոխանցման միջոց:Մեր օրերում արժեքները խեղաթյուրված են, հատկապես մատաղ սերնդի շրջանում, նահանջել են ազգային արժեքները, գերիշխում է օտարամոլությունը: Բարոյական արժեքներից զուրկ մարդը վտանգավոր է հասարակության և հայրենիքի համար:
Ընտանիքից հետո երեխայի դաստիարակության գործում շատ կարևորէդպրոցի դերը: Ուսուցիչը ոչ միայն գիտելիք պիտի տա, այլ նաև ձևավորի բարոյական արժեքներ կրող անհատ:

Աշխատանքի նպատակը.

1. Կարևորել արժեքների դերը մարդու կյանքում:

2.Ռուսաց լեզվի դասերին աշակերտների մոտ ձևավորել և սահմանել ճիշտ արժեհամակարգ:

Խնդիրները.

1. Ուսունասիրել արժեհամակարգի ձևավորման խնդիրները:

2. Տարբեր մեթոդների օգնությամբ առարկայի դասավանդման շրջանակներում ձևավորել արժեհամակարգ:

3. Կարևորել Ազգային արժեքները:

Գլուխ 1. Արժեհամակարգի ձևավորման խնդիրները

Արժեհամակարգը մարդու ապրելաոճի անհատական գաղափարախոսությունն է: Այն ձևավորվում է հասարակական փորձի հիման վրա և արտահայտվում է մարդու նպատակներում, համոզմունքներում, հետաքրքրություններում և մարդու վարքագծում: Արժեհամակարգը ձևավորվում է մանուկ ժամանակ, ընտանիքի ազդեցության ներքո: Այդ պատճառով արժեհամակարգը փոխանցվում է ժառանգաբար: Եթե ընտանիքում ազնվությունը կարևորում են, ապա երեխան կդառնա բարոյական մարդ:

Արժեհամակարգի ձևավորման վրա ազդում են՝

1.մշակութայինփորձը
2. բարոյական սկզբունքները
3. անձնական փորձը
4. ընտանիքում տիրող մթնոլորտը

Մարդու արժեհամակարգը սկսում է ձևավորվելկյանքի առաջին օրերից, այդ պրոցեսը ավարտվում է մոտավորապես 18 - 20տարեկանում, սակայն հետո կարող է փոփոխվել: Մարդու կյանքի հիմնական արժեքներն են առողջությունը, ընտանիքը, հայրենիքը, մայրենի լեզուն, ազատությունը, բարոյական ազգային արժեքները և այլն: Ձեռքբերովի արժեքներն են կրթությունը, մասնագիտական, մշակութային, հոգևոր, նյութատեխնիկական և արժեքներ:

Դեռահասների մոտ հաստատվում է հետաքրքրությունների որոշակի շրջանակ, որը աստիճանաբար կայունանում է: Այդ հետաքրքրությունները դառնում են դեռահասի արժեհամակարգի հոգեբանական բազան: Այս տարիքում նրանք սկսում են ավելի հետաքրքրվել աշխարհայացքի, կրոնի, բարոյականության, էսթետիկայի հարցերով: Դեռահասների համար կարևոր են ոչ միայն հոգևոր, այլ նաև նյութական արժեքները: Արժեհամակարգի ձևավորումը սերտ կապված է իրական կյանքի հետ: Այն ներխուժում է հասարակության հոգևոր, տնտեսական և քաղաքական կյանք: Ժամանակակից հասարակության խնդիրները ձևափոխել են մարդու բարոյական և հոգևոր աշխարհի հիմքերը: Դա իր հերթին փոխել է անհատի արժեհամակարգը և վարքագիծը:

Սոցիալական և քաղաքական փոփոխությունները փլուզեցին եղած արժեհամակարգը: Այս պայմաններում առավել խոցելի են դեռահասները: Նրանք

անպատրաստ են և անկարող դիմակայելու ճգնաժամային իրավիճակներում կատարվող փոփոխություններին: Շատերի մոտ բացակայում են բազային արժեքները՝ կյանքիիմաստ, հոգևոր արժեքներ, հայրենասիրությունև այլն: Այս պայմաններում կարևոր է դպրոցի և ուսուցչի աշխատանքը: Երեխաների դաստիարակման դժվարին գործը ընկնում է դպրոցի ուսերին: Երեխաներին քարոզվող արժեհամակարգը պետք է համապատասխանի և համագործակցի իրական, ցուցաբերվող, գործող արժեհամակարգի հետ: Եվ այն որոշում է դեռահասի վերաբերմունքը շրջապատի հանդեպ, դաստիարակում է նրան՝ որպես բազմակողմանի զարգացած մարդ: Դաստիարակչական աշխատանքների ժամանակ մենք պետք է հիմնվենք համամարդկային, ազգային, կրոնական արժեքների վրա: Այս դժվարին գործում կան խոչընդոտող շատ հանգամանքներ:

Գլուխ 2. Արժեհամակարգի ձևավորումը ռուսաց լեզվի դասերին

Վերջին տարիներին փոխվել էմեր արժեհամակարգը: Համացանցը հնարավորություն է տվել ծանոթանալ այլ երկրների մարդկանց ապրելակերպին և արժեհամակարգին: Օտարը միշտ ավելի հրապուրիչ է. ուստի ֆիլմերից և համացանցից ստացված նյութերը փոխում են երեխաների պատկերացումները: Ծնողների զբաղվածությունը, շփման բացակայությունը նպաստավոր պայմաններ են ստեղծում երեխաների աշխարհայացքը խեղաթյուրելու համար: Իրենց հետաքրքրող հարցերի պատասխանները նրանք գտնում են ոչ թե ընտանիքում, այլ փողոցում, ընկերների միջավայրում և համացանցում: Փոխվում է հետաքրքրությունների շրջանակը: Շատ անգամ չկարողանակով ճիշտ գնահատել և հասկանալ իրավիճակը՝ երեխաները որպես արժեքներ ընկալում սխալ հասկացություններ: Եվ այս պայմաններում դպրոցը երբեմն միայնակ է մնում այս դժվարին գործում: Ռուսաց լեզվի դասերի ժամանակ թեմաների և տեքստերի ճիշտ ընտրությունը թույլ է տալիս ձևավորել համամարդկային արժեքներ: Առարկայի դասավանդման շրջանակներում սովորեցնում ենք արժևորել **ընտանիքը**, **ընկերությունը**,**հայրենիքը** և այլն: Կարդալով տեքստերը՝ աշակերտները տեսնում են՝ ինչ սիրով և հոգատարությամբ են իրենց հասակակիցները պատմում ընտանիքի մասին, նրանք հասկանում են, որ շատ անգամ լիարժեք չեն ճանաչում իրենց հարազատներին. չգիտեն նրանց նախասիրությունների մասին, անուշադիր են տան անդամների նկատմամբ:

Այսպիսով առաջադրանքները հնարավորություն են տալիս սովորողին հնարավորինս մանրամասն ծանոթանալ իրենց մտերիմների խնդիրներին, նախասիրություններին և աշխատանքին:

Կարևորոգույն արժեքներից է **հայրենիքը**: Հայրենասիրության դաստիարակությունը ուսուցչի կարևորագույն նպատակն է:

Յոթերորդ դասարանի դասագրքում մի ամբողջ բաժին նվիրված է Ռուսաստանի և Հայաստանի պատմական որոշ իրադարձությունների: Ուսումնասիրելով Ռուսաստանի մկրտությունը, գրերի գյուտը և այլ պատմական փաստերը՝ աշակերտները էլ ավելի են արժևորում իրենց ազգային, մշակութային և պատմական ժառանգությունը: Եթե անրադառնանք բարոյական, համամարդկային արժեքներին, ապա կարող ենք փաստել, որ այստեղ էլ փոխվել է երեխաների վերաբերմունք: Երբ առաջարկում ես բնութագրել հերոսին, ապա դրական և բացասական վերաբերմունքը

աշակերրընների մոտ չի համընկնում: Սովորողների մի մասը դրական է վերաբերվում ժլատությանը, ընկերներին անօգնական թողնելու և այլ բացասական դրսևորումներին: Եվ նրանք նույնիսկ բացատրում են իրենց տեսակետը: Այստեղ կարևոր է ուսուցչի հնտությունը: Նա պետք է տարբեր հարցադրումներով, օրինակներով ձևավորի աշակերտների մոտ ճիշտ արժեհամակարգ: Ռուսաց լեզվի դասերի ժամանակ արդյունավետ են ժամանակակից և ավանդական մեթոդների կիրառումը: Օրինակ՝ հաճույքով աշխատում են քառաբաժին կազմելիս: Աշակերրընները համախմբվում են ընդհանուր աշխատանքի շուրջ, օգնում են միմյանց: Վենի դիագրամի միջոցով կարողանում են համեմատել, բնութագրել հերոսին՝ գնահատելով դրական և բացասական հատկանիշները: Աշակերտների մոտ հիմնականում համամարդկային արժեքների ձևավորման գործում կարևոր նշանակություն ունի: Նրա դիդակտիկ ֆունկցիան այն է, որ երեխաների մոտ ակտիվանում է ճանաչողական գործունեությունը: Նրանք օգտագործում են իրենց գիտելիքները և անձնական փորձը: Զրույցի առավելությունն այն է, որ ակտիվանում է ուսման պրոցեսը և գործելու ցանկությունը: Զրույցը ապահովում է շատ աշակերտների մասնակցությունը, հնարավորություն է տալիս հաշվի առնել նրանց անհատական առանձնահատկությունները, ինչպես նաև անձնական ինքնուրույն ձեռքբերված փորձը: Բացի այդ երեխաներին հնարավորություն է տրվում ապացուցել ու հիմնավորել սեփական կարծիքը, ձեռք են բերում մտքերի հստակ, գրագետ ձևակերպելու կարողություն: Զրույցի ժամանակնրանք կարողանում են բարոյական ընտրություն կատարել կոնֆլիկտային իրավիճակում: Արտահայտելով տարբեր տեսակետներ աշակերտները ուսումնասիրում են իրավիճակը՝ գնահատելով հնարավոր հետևանքները: Նրանք ընտրում են յուրաքանչյուրի բարոյական արարքները և այդ արարքների վերջնարդյունքները: Բարոյական ընտրություն կատարելու առաջադրանքների բնույթը հնարավորություն է տալիս գիտակցել բարոյական արժեհամակարգի իմաստը:

Բանավեճըորոշակի վիճելի հարցի, խնդրի քննարկումն է: Բանավեճի կարևոր բնութագիրն է փաստերին հիմնվելը, որն առանձնացնում է այն վեճերի այլ տեսակներից: Քննարկելով վիճելի խնդիրը կողմերից յուրաքանչյուրը հակադարձելով զրուցակցին ապացուցում է սեփական դիրքորոշումը: Բանավեճը խթանում է քննադատական մտածելակերպի զարգացումը: Այսինքն բախվելով նոր տեղեկատվությանը՝ աշակերտը պետք է կարողանա եզրահանգումներ անելով,

տվյալ նյութը հստակության արժեքի վերածել:Բանավեճը տեղեկություն է տալիս, զարգացնում է գիտելիքները, ձևավորում է տրամաբանական մտածելակերպ: Այն իրենից ներկայացնում է ճանաչողական գործընթաց, որը առաջանում է օբյեկտիվ առարկայատրամաբանական կոնֆլիկտի առկայության դեպքում, որտեղ մասնակիցների տեսակետները չեն համընկնում: Այդ ճանաչողական գործընթացը իրականացվում է շփման միջոցով: Հաջողված բանավեճի համար անհրաժեշտ է լսելու, հարգանքով վերաբերվելու ունակությունը, ինտելեկտի և գիտելիքի առկալությունը:

Շարադրությունները հնարավորություն են տալիս ճանաչել աշակերտի դիրքորոշումը տարբեր թեմաների շուրջ և փորձել ձևավորել ճիշտ վերաբերմունք տարբեր հարցերի շուրջ:

Արժեհամակարգի ձևավորման և դաստիարակման գործում մեծ է նաև **ասացվածքների** դերը, որոնք կիրառվում են տարբեր թեմաների ուսումնասիրման, լեզվի զարգացման ժամանակ: Ասացվածքի իմաստի բացատրությունը աշակերտի մոտ հատուկ հետաքրքրություն է առաջացնում: Նրանք հաճույքով են մասնակցում զրույցին, օրինակներ են բերում, համեմատում են հայերեն տարբերակների հետ:

Այսպիսով՝ աշխատանքները խորացնում են երեխաների պատկերացումները բարոյական կատեգորիաների մասին:

Համացանցի զարգացման հետևանքով **ընթերցանությունը** դուրս է մղվել երեխաների կյանքից: Սակայն հենց ընթերցանությունն է օգնում ձևավորել կյանքի փորձ չունեցող աշակերտի բարոյական արժեքները, որոնք թույլ են տալիս կշռադատված և մտածված առաջին քայլերը անել դեպի մեծերի աշխարհ: Գեղարվեստական ստեղծագործությունները կարդալով, հերոսների վարքագիծը վերլուծելով՝ աշակերտները սովորում են ճիշտ ընտրություն կատարել կյանքի դժվարին իրավիճակներում: Համեմատելով հերոսի գործողությունները սեփական փորձի հետ: Իրականությունը հնարավորություն է տալիս յուրաքանչյուր աշակերտի ներթափանցել հեղինակի ստեղծած աշխարհ և դժվարին արդիական խնդիրների լուծումներ գտնել: Ստեղծագործություններում երեխան տեսնում է տարբեր իրավիճակներ, որոնք աջակցում են երեխաների հոգևոր արժեքների ձևավորմանը, եթե ուսուցիչը կարողանում է ճիշտ, գրագետ կազմակերպել ստեղծագործության քննարկումը: Կարևոր է նաև դիդակտիկ նյութերի ճիշտ ընտրությունը:

Արժեհամակարգի ձևավորման գործում անգնահատել է դասղեկի ժամերը: Այդ ժամերին կարելի է հաճախակի հարցումներ առաջարկել ըստ կարևորության, դասակարգել մարդու կյանքում ընկերությունը, առողջությունը, նյութական բարիքները, մարդկային հատկանիշները, կրթությունը, սիրելի աշխատանքը, ընտանիքը, բարձր վարձատրվող պաշտոնը, ինչպես նաև դասավորել մարդկային բացասական հատկանիշները՝ չարությունը, մեծամտությունը, դաժանությունը, խաբեբաությունը, կեղծավորությունը, ստորությունը, վախկոտությունը և եսասիրությունը: Հաշվի առնելով ստացված տվյալները կարելի է եզրակացնել, որ աշակերտները հասկանում են առաջարկված բարոյական հատկանիշների նշանակությունը, և նրանք կարողանում են դասավորել ճիշտ հերթականությամբ: Առաջին տեղում նրանք դնում են ընտանիքը, առողջությունը, մարդկային հատկանիշները և խաղաղությունը: Վերջին տեղում են նյութական բարիքները: Այս տվյալները հուշում են, որ ծնողները և ուսուցիչը ճիշտ հիմք են դրել արժեհամակարգ ձևավորելու համար: Երկրորդ հարցման ժամանակ երեխաները առաձնացրեցին առավել նախընտրելի հատկանիշները՝ բարությունը, ազնվությունը, հավատարմությունը: Այս հատկանշները 1 - 3 տեղերում են 70 տոկոս աշակերտների մոտ: Ցավոք աշխատասիրությունը նախընտրելի չէ շատ աշակերտների մոտ և միայն 20 տոկոսի մոտ այն գտնվում է ցուցակի երկրորդ կեսում: Երեխաները դեռ բավարար չափով չեն գնահատում աշխաանքի արժեքը և դերը մեր կյանքում: Բացասական հատկանիշներից ամենավատը, ըստ երեխաների չարությունն ու դաժանությունն է: Այս հարցումը հնարավորություն է տալիս ուսուցչին ուշադրություն դարձնել անհրաժեշտ արժեքների ձևավորման վրա: Եվ դա պետք է արվի ոչ թե քարոզներով, այլ հերոսների անձը և գործերը բնութագրելով:

ԳԼՈՒԽ 3: Ազգային արժեքների կարևորությունը

Ազգային արժեքները գրավում են առանձնահատուկ տեղ մշակույթի ընդհանուր համակարգում: Դրանք երևան են գալիս որպես յուրաքանչյուր ազգի սոցիալիոգեբանական ինքնատիպության արտահայտություններ և տարբերվում են մյուս ազգերի համապատասխան դրսևորումներից:Յուրաքանչյուր ազգ առանձնանում է միայն իրեն հատուկ խառնվածքով, մտածողության տեսակով և աշխարհընկալմամբ: Բոլոր ազգային արժեքները ինչ - որ չափով ենթադրում են մարդու անձնական շահերի, նպատակների սահմանափակում կամ ընդհանրապես դրանցից հրաժարում՝ հոգուտ ազգային շահերի: Դա բնական ընթացք է և գործում է որպես ազգի ինքնապաշտպանության մեխանիզմ:

Ազգային արժեքները հենվում են ընդհանրական համամարդկային արժեքների վրա, որոնք միավորում են տարբեր ազգեր և հանրություններ: Այս տեսակետից կարել է ասել, որ ազգային արժեքները ինչ - որ իմաստով կազմում են համամարդկային արժեքների մի մասը: Ազգային և համամարդկային արժեքները փոխլրացնում են միմյանց: Արժեքները արմատավորվում են տվյալ հանրության, ազգի մեջ հազարամյակների ընթացքում:

Յուրանքանչյուր մարդու արժեքային կողմնորոշումը հիմնականում պայմանավորում են արժեքների երկու խմբեր, որոնք ազդում են նաև ազգային ընդհանրության գաղափարի ձևավորման և իրականցման վրա: Դրանք հետևյալներն են.

ա. ազգաին արժեքները, որոնք համախմբում են ազգը և կանխորոշում նրա ապագան, լեզուն, սովորույթները, ավանդույթները, մշակույթը, ծնողները, երեխաները, ընտանիքը, երկրի տարածքը, մարդու անցյալը, ժողովրդի պատմությունը, կրոնը, ազգի հանրահայտ մարդիկ, ծնողների ազգային պատկանելիությունը, կրթությոան լեզուն, ազգային մտավորականությունը, ազգային արժանապատվությունը, հայրենիքը:

բ. ընդհանուր սոցիալական արժեքները. բարոյական հիմնական արժեքները, սոցիալական արդարությունը, նյութական ապահովությունը, սոցիալական հավասարությունը, տնտեսական անկախությունը, քաղաքական ազատությունը: Լեզուն կարևորագույն ազգային արժեք է. առանց լեզվի չկա ազգ: Լեզուն ոչ միայն

տվյալ էթնոսին պատկանող մարդկանց հաղորդակցության միջոցն է, այլև ազգի մշակութային ժառանգության արտահայտողը և կրողը: Լեզուն նաև տվյալ էթնոսին է ներկայացնում համամարդկային մշակութային կարևորագույն արժեքներ, գիտության, արվեստի նվաճումներ: Լեզուն էթնիկական գործառույթներով աչքի ընկնող ամենացայթուն արժեքն է և ազգի էթնիկական ընդհանրության ամենամեծ ցուցանիշը:

Կարևոր ազգային արժեքներ են մարդու ծննդավայրն ու անցյալը, երկրի տարածքն ու ժողովրդի պատմությունը: Մարդու հոգեկերտվածքի վրա մեծ, անանցանելի ազդեցություն են թողնում նրա ծննդավայրը, այնտեղ ապրող մարդիկ, անցյալն ու նրանում տեղի ունեցած իրադարձությունները: Դրանք սովորաբար միախառնվում են երկրի ներկա ու անցյալ տարածքներին ու նրա պատմությանը, մարդուն միաձուլում իր ժողովրդի պատմության հետ, դարձնում նրա մի մասնիկը, ստիպում ապրել իր երկրի ու ժողովրդի անցյալով, ներկայով և ապագայով:

Կարևոր ազգային արժեքներ են նաև ժողովրդի սովորույթները և ավանդույթները: Դրանք հաճախպայմանավորում են մարդկանց վարքը, հասկանալի ու ընկալելի են դարձնում և միավորում տվյալ էթնոսի ներկայացուցիչներին:

Ազգային միասնության կարևոր գործոններ են ազգի հանրահայտ մարդիկ, որոնք նպաստում են նաև ազգային արժանապատվության զգացումի կարևորագույն արժեքի ձևավորմանը:

Կարևոր ազգային արժեք և ազգային միասնության կարևոր գործոն է նաև ընտանիքը՝ ծնողները, երեխաները, պապն ու տատը, նրանց համատեղ կյանքը: Այն հայ իրականության ամենաուժեղ կողմերից մեկն է: Մի անգամ Միացյալ Թագավորության դիվանագետներից մեկը մեր հեռուստաթերով ասաց, որ իրենց համար անհասկանալի են հայ ընտանիքի ամրության պատճառները, և եվրոպացիները կուզեին դրանք իմանալ և սովորել հայերից:

Այո, ընտանիքը հայի համար տունն է, որից պիտի անպայման ծուխ ելնի, որ այն օջախ դառնա ու լցվի ջերմությամբ: Ու այդ ջերմությունը միայն ֆիզիկական չէ, դա նաև այն սերն է, որի մասին խոսում է Անրի Վերնոյը: Այդ ջերմությունը, սերը փոխանցվում և պահպանվում է նաև տան նյութական կերպի՝ պատերի ու քարի մեջ ու գենետիկորեն փոխանցվում է սերունդներին: Եվ դա չափազանցություն չէ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ելնելով վերոհիշյալից՝ կարող ենք եզրահանգել ,որ արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի դպրոցի և մանկավարժների ուշադրության կենտրոնում: Այս հետազոտական աշխատանքից ելնելով կարող ենք եզրահանգել այն մտքին, որ մատաղ սերնդի արժեհամակարգի ձևավորման վրա նաև շատ մեծ ազդեցություն ունի հայ ժողովրդի մշակույթը և ազգայինի գիտակցումը: Խոսքը գնում է ազգային արժեքային համակարգի ձևավորման մասին: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում նաև շատ կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները: Անշուշտ դպրոցում սովորողները պետք է լավ ծանոթ լինեն հազարամյակների կենսագրություն ունեցող հայկական քաղաքակրթությանը, նրա առաջացման ու զարգացման օրինաչափություններին, ձեռք բերումներին, ստեղծած արժեքներին և համամարդկային նվաճումներին, ինչպես նաև՝ այդ ճանապարհին հայ ժողովրդի դժվարություններին ու կորուստներին: Այս ամենը պետք է օգտագործել ի նպաստ հայոց պետականություն և Հայաստանի լավ քաղաքացի, պատասխանատու, ազնիվ և պարկեշտ մարդ դաստիարակելու համար: Այդ իսկ պատճառով արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում: Յուրաքանչյուր աշակերտ պետք է իմանա, որորպես հայ՝ ո՞րն է իր անելիքն այստեղ ՝հայրենիքում: Հենց այս պատճառով է, որ կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձեւավորումը: Արժեհամակարգը պետք է ձևավորվի ազգային հոգևոր-բարոյական ընդհանրականության հիմքի վրա: Կրթության հիմքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը: Դպրոցը պետք է լինի օրինակելի տարածք բոլորի համար ,որտեղ կան հաստատուն էթիկական 13 նորմեր, որտեղ աշակերտները սովորում են լինել դրանց համապատասխան: Դպրոցը պետք է պայքարի հանրության մեջ տարածված կարծրատիպերի և արատների դեմ, և այդ պայքարում պարտավոր է լինլ միշտ հաղթող: Դպրոցում կյանքը չի կարող հեշտ լինել երեխայի համար՝ նա պետք է զգա և՛ցավ, և՛ ուրախություն, ունենա թե դժվարություններ, թե հաղթանակներ: Դպրոցում աշակերտը պետք է ընկալի համակեցության նորմերի իմաստը և ընդունի դրանք: Այդ ամենի պտուղը պետք է լինեն իրական արժեքները, այլ ոչ թե թելադրված, անգիրարած, բայց աշակերտի

համար ոչինչ չնշանակող ճշմարտությունները: Սեփական փորձից կարող եմ եզրակացնել, որ գեղարվեստական գրականությունը լավագույն միջոցն է, որը կյանքի բոլոր փուլերի համար է և կյանքի յուրաքանչյուր շրջափուլում այն իր ազդեցությունն ու բարոյախոսությունն ունի: Եթե էթիկական նորմերը ծառի արմատներն են, իսկ արժեքները՝ բույնը, ապա բարոյականությունը դրա սաղարթն է: Բարոյական է այն ամենը, ինչը նպաստում է արժեքներ ի պահպանմանն ու դրանց զարգացմանը և չի հակասում դրանց: Եթե մենք կարողանանք կառուցել դպրոցներ, որոնք կձևավորեն հարուստ արժեհամակարգ ունեցող աճող սերունդ, կունենանք աշխարհի ամենալավ և ամենա իմաստալից կրթական համակարգը և հասարակությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Էքսպերիմենտալ կրթություն միջազգային ամսագիր h. 1, մաս 2, 2014թ.:

2. Знанио https://znanio.ru/pub/224Деятельность педагога по формированию ценностых ориентаций учащихся.

3. Вестник образавания https://vestnik.edu.ru/ Ценности и смыслы современных детей: что дает семья и школа.

4. Գևորգյան Ա. «Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում»:

5. ՁեյնանայանՆ. Անձնային արժեք հասկացությունն անձի տեսություններում: Հանրային կառավարում, «Պետական ծառայություն»:

6. https://www.arlis.am/

7. Մանասյան Ն. Հանրակրթության արժեքային համակարգը «Մանկավարժություն» գիտամեթոդական վերլուծական ամսագիր 2004թ. h. 1, մաս 2:

8. Մուդրիկ Ա.Վ. «Դպրոցական անձը և նրա դաստիարակությունը կոլեկտիվում» Երևան 1986թ.:

9. Միքայելյան Հ. Ս. «Ազգային արժեքի մասին», «Մարդ և հասարակություն», h. 4, 2012թ.: